ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը ավագ դպրոցում՝ ըստ հանրակրթության պետական չափորոշչի

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Ղուկասյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գորիսի N 4 ավագ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Ուսուցման կարողունակահեն մոտեցումը հանրակրթական համակարգի բարեփոխումների համատեքստում 4

2. Հ. Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը՝ ըստ նոր չափորոշչի պահանջների.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը հասարակության հիմքն է: Ինչպիսին դպրոցն է, այնպիսին է և հասարակությունը. այն անդրադարձն է դպրոցի, իսկ դպրոցի հիմքում բազմաշերտ, բայց երկկողմ ուսումնական գործընթացն է՝ ուսուցիչ և աշակերտ. ահա թե ովքեր են պայմանավորում վաղվա հասարակության որակը ամեն առումով: Սա ավելի քան լուրջ գործընթացն է, որովհետև գիտելիք շրջանառելուց զատ՝ այստեղ առկա են շատ զուգահեռականներ՝ փոխկապակցված, փոխլրացական, ուղղակիորեն և միջնորդավորված ձևով նույն նպատակը հետապնդող: Բազմաթիվ գործոններ՝ սոցիալական, հոգեբանական, ֆիզիկական, մտային, անձնական ու անհատական, կամ ծառայում են ուսումնադաստիարակչական ցանկալի վերջնարդյունքի ձևավորմանը, կամ ավերում ու աղավաղում են այն:

2021 թ. փետրվարի 4-ին ՀՀ կառավարության ընդունած թիվ 136-Ն որոշման համաձայն՝ փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ:[1] Այդ փաստաթղթի գլխավոր փոփոխությունը գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության անցումն է: Դրա հետևանքով հանրակրթության ոլորտում նախատեսվել և մաս առ մաս իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ՝ ուսուցման գործընթացի և ոլորտի թիրախային շահակիցների համար նորանոր պահանջներ դնելով: Պարզ է, իհարկե, որ այդ փոփոխություններից անմասն չի կարող մնալ նաև հայ գրականության ուսուցման գործընթացը, հետևաբար սույն հետազոտության թեմայի **արդիականությունը** պայմանավորված է այդ առարկայի դասերին վերոնշյալ իրողություններին ճիշտ արձագանքելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության **նպատակն** է նպաստել ավագ դպրոցում հայ գրականության ուսուցման գործընթացի պատշաճ կազմակերպմանը՝ համաձայն հանրակրթական պետական նոր չափորոշիչի դրույթների՝ քննելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները:

Առաջադիր նպատակի համար սահմանվել են հետևյալ **խնդիրները**՝

1. **անդրադառնալ** կարողունակահեն կրթության առանձնահատկություններին,

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (մուտք՝ 30. 10. 2022):

2. ավագ դպրոցում Հ. Թումանյանի ստեղծագործությունների ուսուցման օրինակով **ցույց տալ** հանրակրթական պետական նոր չափորոշչի պահանջների կենսագործման հնարավորությունը:

Հետազոտության **օբյեկտը** «Հայ գրականություն» առարկայի ժամերին կարողունակահեն կրթության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության **առարկան** «Հայ գրականություն» առարկայի ժամերին կարողունակահեն կրթության կազմակերպման եղանակներն ու միջոցներն են:

Հետազոտությունն իրականացվել է վերլուծության, դիտման և մեթոդական մշակված համակարգի գիտափորձնական հիմնավորման **միջոցներով**:

1. Ուսուցման կարողունակահեն մոտեցումը հանրակրթական համակարգի բարեփոխումների համատեքստում

Հանրակրթական պետական նոր չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքերի: Չափորոշչի 6-րդ և 7-րդ կետերով սահմանվում է հետևյալը. «Կարողունակությունները սովորողների կողմից ուսումնառության և դաստիարակության ընթացքում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողների կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն

ուղղված են կարողունակությունների ձևավորմանը»[2]: Փաստաթղթով ամրագրված է, որ միջնակարգ կրթության եռաստիճան համակարգով կրթության կազմակերպմամբ սովորողի մեջ պետք է ձևավորվեն 8 կարողություններ՝

1. լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2. սովորել սովորելու կարողունակություն,
3. ինքնաճանաչման և սոցիալական կարողունակություն,
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. թվային և մեդիա կարողունակություն,
6. մշակութային կարողունակություն,
7. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8. տնտեսական կարողունակություն:[3]

Ի՞նչ է կարողունակությունը (կոմպետենցիա), ինչպե՞ս է այն սահմանվում:

Կարողունակությունը անհատի ինտեգրալային (ներգրավված) համալիր բնութագրիչն է, այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի (դիրքորոշում) և արժեքների համակարգն է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու խնդիրներ:

Դեռևս նախորդ դարում ամերիկացիները թեստերի միջոցով հետազոտությունների արդյունքում հանգեցին այն եզրակացությանը, որ երբեմն մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող մասնագետը բավարար արդյունք չի ապահովում: Այսինքն՝ գիտելիքը անհրաժեշտ է ուսումնառության գործողությունների շղթայում, բայց բավարար չէ որակ ունենալու համար, քանի որ թերի է: Եթե կարողունակությունը ներկայացնենք գծապատկերի միջոցով (տե՛ս *Գծապատկեր 1*), ապա արդեն ակնհայտ կլինի, որ այն ապահովող փոխկապակցված քառաստիճան համակարգի միայն մի օղակը ներկայացնող գիտելիքը ինչու արդյունք չի ապահովում:

[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Կարողունակություն



Գծապատկեր 1: Կարողունակության բաղադրիչները

Ի՞նչ է գիտելիքը, հմտությունը, արժեքը, դիրքրոշումը:

Փորձենք հասկանալ, թե ինչ են ենթադրում վերոնշյալ 4 հասկացությունները:

ա) **Գիտելիք**: Բառի հանրագիտարանային սահմանումը հետևյալն է՝ *ծանոթություն, իրազեկում, կամ հասկանալ ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան՝ փաստեր, տեղեկատվություն, նկարագրություններ, կամ փորձի միջոցով ձեռք բերված ունակություններ կամ ընկալման, բացահայտման կամ սովորելու միջոցով՝ կրթություն: Պլուտոնը գիտելիքը սահմանում է որպես «արդարացված ճշմարիտ հավատք»:*[4]

բ) **Հմտություն**: Այս բառի բացատրությունը, ըստ բառարանի, հետևյալն է՝ ա) սովորելով՝ վարժությամբ ձեռք բերած ունակություն, բ) որևէ բնագավառի գործնական գիտելիքների ամբողջականությունը, գ) հմուտ լինելը:[5]

գ) **Դիրքորոշում:** Անձի ներքին և առավելապես ենթագիտակցական պատրաստակամությունը ակտիվության որևէ տեսակ իրագործելու համար ուղղվածություն է հաղորդում մարդու գործունեությանը և նախորդում է գիտակցական հոգեկան գործընթացներին:[6]

դ) **Արժեք**: Կարևորություն, օգուտ, նշանակալի իր կամ երևույթ: Արտաքնապես արժեքը առարկայի կամ երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա

[4] Գիտելիք, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AB%D5%BF%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84 (մուտք՝ 30. 10. 2022):
[5] Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 876:
[6] Դիրքորոշում, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4 (մուտք՝ 30. 10. 2022):

նշանակությունն ու օգտակարությունը բնությունից սահմանված չէ:[7] Արժեքներներ են՝

1. առողջությունը,
2. սերը, ընտանիքը, երեխաները, տունը,
3. մտերիմները, ընկերները, շփումը,
4. ինքակառավարումը աշխատանքի մեջ, աշխատանքից հաճույք ստանալը,
5. նյութական բարեկեցությունը,
6. հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը,
7. ժամանցը՝ հաճույք, հոբբի, զվարճանք,
8. ստեղծագործական ինքնադրսևորումները,
9. ինքնակրթությունը,
10. սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ,
11. ազատությունը (խոսքի, ընտրության և այլն),
12. կայունությունը:

Ի տարբերություն նախկին չափորոշչի, որը հենվում էր մեկ առարկայի վրա, կարևորում այդ առարկայից ունեցած գիտելիքը, նոր չափորոշիչը հիմնվում է կարողունակությունների վրա, այսինքն՝ վերառարկայական արդյունքների վրա:

Առարկաները դիտվում եմ որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար, և որպես կանոն՝ այդ որակներից (կարողունակություններ) յուրաքանչյուրը ձևավորվում է մի քանի առարկաների ուսումնասիրության արդյունքում:

Ի՞նչ է սովորելը. այն շարունակական բարդ մի գործընթաց է՝ բաղկացած ընդհանրական շղթայի փոխլրացական օղակներից, և այդ շղթայի վերջնակետը համընկնում է մարդու աշխատանքային գործունեության ավարտին. աշխատում ես, ուրեմն պետք է սովորես. սա այլևս անառարկելի է:

Ո՞վ է դպրոցում այս բարդ գործընթացի ամենամեծ պատասխանատուն. ուսուցիչը, որովհետև գիտելիք փոխանցողը, կարողություն, արժեք և դիրքորուշում ունենալու ունակություն ձևավորողը նա է: Այո՛, ժամանակակից դպրոցը, կրթական չափորոշիչները, համաշխարհային փորձը և շատ այլ գործոններ ուսուցման կենտրոն

[7] Արժեք, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84 (մուտք՝ 30. 10. 2022):

են դարձնում աշակերտին, դա ճիշտ է, բայց ուսուցիչն է այն շարժիչ ուժը, որը պիտի առաջ մղի կրթություն կոչվող այդ հսկայածավալ դժվարընթաց անիվը: Նա ուսուցման անձնավորված մեթոդն է:

Այսպիսով՝ նկատում ենք, թե որքան կարևոր է աշակերտին հաղորդել սովորելու շարունակական, դժվարին, բայց անհրաժեշտ գործընթացի գիտակցումը:

2. Հ. Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը՝ ըստ նոր չափորոշչի պահանջների

Ավագ դպրոցի 11-րդ դասարանում աշակերտները անցնում են «Հովհ. Թումանյանի կենսագրությունը, ստեղծագործությունները» թեման: Նախատեսված են ծրագրային մի շարք գործեր, ուսուցիչը կարող է անդրադառնալ նաև այլ գործերի: Մենք ընտրել ենք Թումանյանի կյանքի, գրական–հասարակական գործունեության, ստեղծագործական ժառանգության ուսուցումը՝ ըստ նոր չափորոշիչների: Հարկ է նշել, որ չափորոշչային կարողունակությունների սահմանները շատ **թափանցելի են,** և հաճախ այդ կարողունակությունները ուղղակի ներթափանցված են միմյանց մեջ. չէ՞ որ դրանք համակարգային ամբողջականությամբ են որակ ապահովում: Այժմ փորձենք հերթակայությամբ ցույց տալ, թե աշակերտը «Թումանյանը» թեմայի ուսուցման արդյունքում ինչպիսի կարողունակություններ կարող է ձեռք բերել:

Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Բանալի բառեր՝ տիրապետել, ճանաչել, ըմբռնել, արտահայտել, կիրառել և ձևավորել:

Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Լեզուն կիրառվում է որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը: Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ:

Սովորողին ներկայացվում է Թումանյանի կենսագրությունը և ստեղծագործական ամբողջ ժառանգությունը՝ չափածո, արձակ, հրապարակախոսություններ, հոդվածներ, նամակներ և այլն:

Չնայած նախորդ փուլում աշակերտն արդեն կարդացել է Թումանյանի գործերը, այնուամենայնիվ, ուսուցիչը կազմակերպում է նյութի մատուցումը արդեն այլ մակարդակում. կարդում է, ներկայացնում նյութերի ստեղծման պատմությունները, մատնացույց անում կիզակետային, հանգուցային գաղափարները: Ուսուցման այս գործընթացում օգնում է աշակերտին ծանոթանալ հեղինակի ոճական հնարքներին, պատկերային մտածողությանը, գաղափարական հարցադրումներին: Ասել է թե, Թումանյան հեղինակին ճանաչելուց հետո սովորողն ինքն արդեն պետք է կարողանա ձևակերպել և փոխանցել սովորածը: Այսինքն՝ ի հայտ բերի լեզվի բանավոր և գրավոր տարրերին տիրապետելու կարողունակությունը:

Ի՞նչ կարող է առաջարկել ուսուցիչը: Ինչպե՞ս կարող է օգնել, ուղղորդել աշակերտին, ի՞նչ իրավիճակներ կարող է առաջարկել կամ ստեղծել ակնկալվող որակ ապահովելու համար: Սովորողն արդեն ձեռքի տակ ունի Թումանյանի ստեղծագործությունը, որին հասցրել է ծանոթանալ: Կարևոր բաղադրիչ է նաև հեղինակի կենսագրությունը ամենալայն ընդգրկմամբ՝ փաստեր, թվեր, հուշեր, ֆիլմեր, պատմություններ, մերջբերումներ, հեղինակնակի նամականին, հոդվածներ, ելույթներ: Սովորողին հանձնարարվում է ներկայացնել Թումանյան հեղինակի՝ իր ամբողջ պատկերասրահով: Աշխատանքային գործընթացում սովորել-սովորեցնել նպատակային փոխազդեցությունը շեշտադրելու միտումով կարելի է դասարանը թիմերի բաժանել: Աշակերտը ստեղծում է նաև սահիկաշար՝ նշված նյութերը ներառող, որտեղ յուրաքանչյուրը կարևորում է իր վերաբերմունքը նյութի նկատմամբ: Ուսուցիչը այստեղ ուղղորդող գործընկեր է, որը հուշում-լրացնում է աշակերտին, խմբագրում ոչ ճիշտ մոտեցումները: Ուսումնառողը՝ աշակերտը, կրթական գործընթացի լիիրավ սուբյեկտն է. նա ինքնուրույն է վարում ճանաչողական գործունեությունը, իրականացնում անհրաժեշտ տեղեկության ձեռքբերման և ներկայացման գործընթացը, կիրառում գիտելիքների յուրացման և դրանք գործնականում օգտագործման մեթոդներ: Որպես ամփոփում՝

հանձնարավում է կապակցված խոսք՝ «Զրույց Թումանյանի հետ» վերնագրով: Սա գիտելիքների ստուգման արդեն գրավոր տարբերակն է, որում երևում են աշակերտի լեզվական գիտելիքների ողջ պաշարը, հաղորդակցական հմտությունները, բառամթերքի ընտրությունը, պատկերների ընկալումը, ստեղծումը, բնագրերի իմացությունը և սեփական գնահատականն ու վերաբերմունքը «Թումանյան» գրական երևույթի հանդեպ:

Սովորել սովորելու կարողունակություն

Բանալի բառեր՝ ճանաչել, ինքնակազմակերպվել, գնահատել, քննադատել, ուսումնասիրել, կիրառել, ձևավորել:

Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները: Ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Հիմա ցույց տանք, թե Թումանյանի «Քառյակներ» թեման ուսումնասիրելիս, աշակերտները սովորել-սովորելու կարողունակության ինչ բաղադրիչների են հաղորդակցվում ու յուրացնում: Կիրառում ենք գրական խմբակի մեթոդը: Դասարանը բաժանվում է խմբերի, առաջնությունը տրվում է թիմային աշխատանքին, և յուրաքանչյուր խմբի տրվում է առաջադրանք, սահմանվում է ժամանակ:

1. Ուսումնասիրել քառյակի առանձնահատկությունները, ապա սահմանել քառյակը՝ որպես գրական ժանր: Ներկայացնել քառյակների թեմատիկան և թեման: Համեմատել Թումանյանի քառյակները Խաքանիի քառյակների հետ. որո՞նք են ընդհանրությունները և տարբերությունները:

   Օրինակ՝ համեմատել հետևյալ քառյակները՝

   -Էս է, որ կա, ճիշտ ես ասում, թասդ բեր.... (Թումանյան)

   Հոգուդ հավքը հանկարծ թռավ, ի՞նչ ես դու.... (Խաքանի)

2. Քառյակների տողերով հիմնավորել, թե ո՞րն է Թումանյանի երազած մարդու կերպարը. գտնել այդ կերպարի համար բնութագրական մակդիրներ: Համեմատել Թումանյանի կերպարի հետ: Օրինակ՝

ա) Լինե՜ր հեռու մի անկյուն....

բ) Առատ, անհատ՝ Աստծու նըման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես….

գ) Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի….

3. Ցույց տալ Աստված և Մարդ հարաբերությունը, զուգահեռել Նարեկացու Մատյանի հետ, բերել օրինակներ (ձեռքի տակ ունենալ բնագրերը:)

4. Ո՞րն է բանաստղեծի կոչումը՝ ըստ Թումանյանի: Հիմնավորել բնագրով: Զուգահեռել «Բարձրից» բանաստեղծության հետ: Գրել եզրահանգում:

5. Անցավոր մարդը հավերժի հոլովույթի մեջ: Գտնել ընդհանուր եզրեր հայ գրականության այլ գործերի հետ: Ձևավորել այդ մարդու կերպարը:

Յուրաքանչյուր խմբի տրվում են նաև պաստառներ և այլ պարագաներ՝ արդեն ավարտուն աշխատանքը ներկայացնելով պաստառի միջոցով: Աշակերտի աշխատանքի արդյունավետությունը կախված է հարցադրումից, առաջադրանքը ճիշտ կազմակերպելուց:

Խմբերը ներկայացում են աշխատանքները, խրախուսվում և գնահատվում են:

Անդրադարձի միջոցով փորձենք հասկանալ կարողունակության բաղադրիչների յուրացման աստիճանները: Վերոնշյալ աշխատանքի միջոցով սովորողները կարողացան՝

ա) աշխատել ինքնուրույն և թիմով,

բ) ճանաչել իմացականի և չիմացականի սահմանները,

գ) ինքնակողմնորոշվել,

դ) աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում,

ե) քննադատաբար մոտենալ սեփական աշխատանքին, վերլուծել,

զ) ցուցաբերել ստեղծագործական մոտեցումներ՝ ձևավորել պաստառներ:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Բանալի բառեր՝ կազմակերպել, ճանաչել, դրսևորել, ընկերակցել, ձևավորել, համագործակցել, կարգավորել, ներկայացնել:

Այս կարողունակությունն ունի ընդգրկման լայն սահմաններ: Այստեղ կենտրոնում սովորողն է, որը կարողանում է ինքնաանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով հասնել ինքնաճանաչման: Նա վստահ է իր ուժերին, վերահսկում է իրեն ու հաջողությամբ կառավարում սեփական ժամանակը: Կարևորում է նաև առողջ կենսակերպը: Պատասխանատու է իր անձի հանդեպ, ազնիվ է, հարգալից նաև այլոց հանդեպ՝ անկախ ազգությունից, տարիքից, սոցիալական ծագումից, համոզմունքից և այլն: Սովորողը կարողանում է ընկերակցել, աշխատել թիմում, համագործակցությամբ կարգավորել կոնֆլիկտները: Ճանաչում է սեփական մշակույթը և այլ մշակույթների հետ համադրման արդյունքում ձևավորվում է անհատական պատկերացումներ դրանց տարբերությունների մասին: Այս կարողունակության առաջադրած հատկանիշների ձևավորումը կարելի է ցույց տալ Թումանյանի հետևյալ գործերի միջոցով՝ «Ահմադը», «Գրազը», «Հառաչանք»:

Քայլ 1-ին: Կարևորելով ինքնակազմակերպման հատկանիշը՝ ընտրվում է խմբերի վերահսկիչ–համակարգող, որն ինքն ընտրում է իր օգնականներին և ձևավորում աշխատանքային խմբերը: Բաժանվում են նույն առաջադրանքները և սահմանվում է կատարման ժամկետ:

Առաջադրանք

1. Բնագրերից դուրս գրել հիմնաբառեր և հատվածներ, որոնք բնութագրում են հերոսների հոգեկան աշխարհը, ապրումները:

2. Ցույց տալ սոցիալական միջավայրի, քաղաքական իրադարձությունների և մարդու վարքագծի փոխազդեցական կապը:

3. Ցույց տալ մարդու և բնության կապը. բնությունը՝ մարդկային հոգու թարգմանիչ և զգացողությունների արտահայտիչ:

4. Սահմանել հեղինակի ասելիքը, ավելացնել սեփական նկատառումները:

Խմբերը ներկայացնում են նույն առաջադրանքի շուրջ աշխատանքները, որոնք վերջնարդյունքում շարունակում ու լրացնում են միմյանց: Կատարվում է անդրադարձ, ստացվում են աշխատանքներ բանալի բառերով: Ուսուցիչը գործընկեր է և ուղղորդող: Կատարվում է գնահատում հիմնավորումներով:

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Բանալի բառեր՝ ճանաչել, գիտակցել, արժևորել, ցուցաբերել, նախաձեռնել:

Ըստ այս կոմպետենցիայի՝ աշակերտը ներկայանում է որպես ՀՀ լիիրավ քաղաքացի, որը գիտակցում է ՀՀ սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունը տարածքային ու համաշխարհային մակարդակում: Նա արժևորում է մարդկային կյանքն ու արժանապատվությունը, գիտակցում է քաղաքացիական սեփական պարտքը, իր մասնակցության կարևոր լինելը հասարակական կյանքի մշակութային, պետաիրավական, տնտեսական ոլորտին, ցուցաբերում է նախաձեռնություն և հետևանքների համար ստանձնում է պատասխանատվություն:

Նշված կոմպետենցիայի հատկությունը ձևավորելու համար աշակերտները աշխատում են «Սասունցի Դավիթ», «Էսպես չի մնա», «Իմ ընկեր Նեսոն» և այլ գործերի վրա:

Ընդհանուր դասարանին տրվում է նույն առաջադրանքը: 2-3 րոպե մտորումից հետո աշակերտները նշում են վարքագծային բնութագրական այն հատկանիշները, որոնք հատուկ են գիտակից, հայրենասեր, պատասխանատու քաղաքացու կերպարին: Բերում են օրինակներ հայ գրականությունից, իրականությունից, այլ ժողովրդի գրականությունից: Հարցին կարելի է մոտենալ նաև հակասման միջոցով:

Այնուհետև տրվում է խմբային աշխատանք:

1-ին խումբ- Ս. Դավթի կերպարը՝ որպես ազատության, հայրենասիրության, սոցիալական արդարության, պետական մտածողության և պատասխանատու վարքագծի կրող: Հիմնավորել բնագրային մեջբերումներով:

2-րդ խումբ- Նեսոյի կերպարը- Սոցիալական անարդարության և բարեվարքության կապը պատմվածքում: Հեղինակի մտորումները և ափսոսանքը՝ մանկության ընկերոջ կորսված նկարագրի շուրջ:

3-րդ խումբ- Ժամանակն ու մարդը «Էսպես չի մնա» գործում: Անցավոր մարդու թողած հետքը հավերժության վրա և մարդու պատասխանատվությունը հավերժության հանդեպ ժամանակի մեջ:

Աշխատանքի կատարմանը տրվում է սահմանափակ ժամանակ՝ 15 րոպե, որից հետո խմբերը ներկայացնում են աշխատանքները՝ պարտադիր բնագրային մեջբերումներով: Յուրաքանչյուր առաջադրանքում կարևոր է նաև բառ-հոգեբանություն-ասելիք շղթան: Օրինակ՝ «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքում՝ Նեսոյի

խոսքը՝ «Բա մի չայի փող չես բաշխո՞ւմ»: Նախադասությանը հետևում է հեղինակի հոգու ցավի արտահայտությունը, ափսոսանքը, ապա՝ ասելիքը. «Եթե նա էլ ուսում ստանար, գուցե ինձնից ավելի լավ մարդ լիներ»:

Այս կարողունակության ձեռքբերման լավագույն տարբերակներ են նաև էքսկուրսիաները, շաբաթօրյակները, այցելությունները կարիքավոր ընտանիքներին, բնապահպանական միջոցառումները (ծառատունկ և այլն), թեմատիկ զրույց-քննարկումները, ֆիլմի դիտումները և այլն: Այս ամենի արդյունքում սովորողն ավելի դյուրին և ավելի խորքային է ընկալում իրեն՝ որպես հասարակության մաս, անդամ և ավելի գիտակից է ստանձնում իր դերն ու պատասխանատվությունը սոցիալական միջավայրում: Այս միջոցառումները կրթական գործընթացի անքակտելի մասն են և պետք է հաճախ կիրառվեն:

Թվային և մեդիա կարողունակություն

Բանալի բառեր՝ տիրապետել, պատկերացնել, կողմնորոշվել, վերլուծել, գնահատել, վերափոխել:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ մեդիան (լրատվությունը)՝ իր բոլոր ենթաճյուղերով ու ըմբռնումներով, ներառել է հասարակական կյանքի բոլոր ենթաշերտերը, այդ թվում և դպրոցը: Այսօր շուրջօրյա լրատվական տարափ է տեղում բոլոր բնագավառների վրա: Դպրոցն ու աշակերտը ևս անմասն չեն: Խնդիրը երկկողմանի է, և այդ երկու կողմերը խորքային հակադրություն ունեն: Անտեղյակ, գիտելիք չունեցող, ծնողի և ուսուցչի հսկողության և ուշադրության տիրույթից դուրս աշակերտը սոցիալական ցանցերում հեշտությամբ կարող է թակարդն ընկնել, հայտնվել վտանգի մեջ: Վտանգը բազմաբնույթ է՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, բարոյական և այլն:

2-րդ դեպքում մեդիագրագիտության հմտություններին տիրապետող աշակերտը կարող է կողմնորոշվել տեղեկատվական հոսքում. նա քննադատաբար է վերլուծում նյութը, գտնում և տարածում է գրագիտության նորմերի համապատասխան նյութեր: Տիրապետում է մեդիաարտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, իր ստեղծագործությունները ծառայեցնում է քաղաքացիական իրավունքների իրացման նպատակով:

Առաջադրանքը հանձնարարել որպես տնային աշխատանք՝ նկատի ունենալով ժամանակն ու ծավալը:

1. Թեմա՝ Հովհաննես Թումանյանը՝ քաղաքացի և հասարակական գործիչ:

Առաջադրանք

1. Ընտրել նյութերը, համակարգել, հիմնավորել ներքին կապը:

2. Կազմել ժամանակագրական քարտեզ, նշել տարեթվերը, ծավալած գործունեությունը, արդյունքները, նպատակը, փնտրել մեդիա դաշտում, սոցցանցերում (Վերնատուն, Հայարտուն, Կովկասյան գրողների ընկերություն):

3. Ցույց տալ անհատ (Թումանյան)- հասարակություն փոխներգործուն կապը:

4.Կառուցել գծապատկեր, պատրաստել նաև սահիկաշար նյութերն ուսումնասիրելուց հետո: Կատարված աշխատանքի քննարկումը կատարել դասարանում:

Մշակութային կարողունակություն

Բանալի բառեր՝ ճանաչել, արժևորել, ձևավորել, զարգացնել:

21-րդ դարի մարտահրավերները բազմաթիվ են, բայց 1-ին տեղում է համաշխարհայնացումը իր կործանարար հետևանքներով: Փոքր ազգերի անելիքը ավելի շատ է, որովհետև այն առաջին հերթին իրենց է սպառնում: Այն սպառնում է ջնջելու աշխարհագրական բաժանարար գծերը, սրբելու, վերացնելու ազգային դիմագիծը, զրոյացնելու, յուրացնելու կամ օտարելու մշակութային ինքնատիպ արժեքները, թմրեցնելու ազգային ինքնագիտակցությունը, որին կհետևեն անտարբերությունը, անմեղսունակությունը և փլուզումը: Ո՞րն է անելիքը. կանգնել ազգայինի հիմքին և շարունակաբար ամրացնել այն: Այս գործընթացի սկիզբը մանկապարտեզն է, շարունակությունը՝ դպրոցը: Սա պատասխանատու, գիտակցական լուրջ գործընթաց է, որը պետք է իրականացվի դպրոցում ուսուցչի նախաձեռնությամբ, աշակերտների մասնակցությամբ: Մշակութային կարողունակությունը սովորողի մոտ ձևավորում է լայն մտահորիզոն, նա ճանաչում է հայ մշակույթը, իմանում է նրա ծագումնաբանությունը, դրդիչ գործոնները, պատկերացնում է պատճառահետևանքային շղթան և այս հիմքի վրա ձևավորում է սեփական ինքնությունը՝ որպես այդ մշակույթի կրող, ընտանիքի, համայնքի և պետության՝ որպես պատասխանատու կառույցների դերը: Նա կարող է համադրել,

զուգահեռել հայ և համաշխարհային մշակութային գործերը, ճանաչել բազմազանությունը, որի արդյունքում ձևավորվում է մշակութային գրագիտություն և ճաշակ։

Այս կարողունակության նպատակները կարելի է իրականացնել «Անուշ» պոեմի համակողմանի ուսումնասիրմամբ և ուսուցմամբ։ Թեման ունի նաև նախագծային աշխատանքի հանարավորություն Պատմության, Աշխարհագրության առարկաների հետ։ Կարելի է կազմակերպել այցելություն թանգարաններ, բեմադրություններ անել, Թումանյանի թարգմանությունների վերլուծություններ և այլն՝ վերհանելու ընդանուր և մասնավոր դրսևորումները։

Նախատեսվող առաջադրանքներ՝

1. Պոեմից դուրս գրել ժողովրդական-ծիսակարգային նշանակության տեսարաններով բնագրային հատվածներ (Համբարձման, հարսանիքի կոխի, թաղման տեսարաններ)։ Ներկայացնել ծագումնաբանական-հենքային պատմությունները։

2. Ցույց տալ մարդու և բնության կապը. բնապատկերային նկարագրությունները՝ որպես նախահող կերպարների հոգեբանական բացահայտումների համար (Նախերգանքը, առաջին երգից հատվածներ և այլն)։

3. Պոեմի երկխոսությունը, բառընտրությունը (բառը՝ որպես սպասվող տեսարանի կամ արդեն կատարվածի հուշում)։

ա) Վո՛ւշ- վո՛ւշ, Անո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ, քուրիկ….

բ) Թշշում է ձորը՝ արյունով լցված….

գ) Դուշման Դեբեդն է մենակ մռնչում….

դ) Ադաթ կա սակայն էն մութ ձորերում….

4. Պոեմի երաժշտայնությունը։ Մեջբերել պոեմի երգվող հատվածները, ունկնդրել, նշել առանձնահատկությունները, զուգահեռներ տանել հոգևոր երաժշտության հետ (Ն. Շնորհալի, Կոմիտաս և այլն)։

5. Սիրո տեսարանների պատկերավորման ու հանգուցալուծման առանձնահատկությունները այլ գրականություններում։ Գրել ինքնուրույն աշխատանք՝ հիմնված համեմատությունների և հակադրությունների վրա։ Ուշադրություն դարձնել ոչ հայկական մշակութային ըմբռնումներին։ Սիրո՝ որպես

գերագույն զգացմունքի դրսևորումները այլ հեղինակների գործերում, օրինակ՝ Պուշկինի «Եվգենի Օնեգին» գործում, որը իրենք անցնում են դպրոցում:

Առաջադրանքը աշակերտներին հասցնելու, կատարելու կամ ստուգելու մեթոդները, կանոնները, տեխնոլոգիաները բազմազան են: Այստեղ ընտրության ժամանակ առաջնային ենք համարել անցնելիք թեմաների հիման վրա կարողունակությունների արդյունավետ զարգացման խնդիրը:

Տնտեսական կարողունակություն

Բանալի բառեր՝ վերլուծել, գնահատել, արժևորել, հասկանալ, ընկալել, ստանձնել

Տնտեսությունը հասարակության կյանքի բազմաշերտությունը սնուցող կենսատու երակն է: Այն ուղիղ համեմատական է հասարակության սոցիալական, կրթական մշակութային, հոգևոր և այլ բնագավառների զարգացմանը: Սովորողը կարողանում է վերլուծել և գնահատել մասնավոր ձեռնարկատիրական, ժողովրդական տնտեսության, համաշխարհային մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործողությունները և պետության դերը տնտեսության մեջ: Աշակերտը ճանաչում, գնահատում և արժևորում է կնոջ և տղամարդու դերը: Նա հասկանում է տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունը: Կարողանում է ընկալել բնության և հասարակության փոխազդեցությունը, ինչպես նաև իր պատասխանատվությունն է զգում շրջակա միջավայրի և բնության պահպանման գործում:

Ընտրված նյութեր՝ «Եղջերուն», «Եղջերվի մահը», «Երկաթուղին», «Գիքորը»:

Առաջադրանքներ՝

1. Բնագրով հիմնավորել մարդու պատասխանատվությունը բնության հանդեպ: Մարդ-բնություն-հոգեկան ներդաշնակություն կապը հեղինակի մտորումներում. «Ես շրջեցի հայացքս, իբր թե սարերին եմ նայում….», «Եվ ես սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին….», «Եվ էնքան տգեղ էր թվում ինձ կյանքը….»:
2. Մարդու ընտրության և կողմնորոշման մոտեցումները սոցիալական հարթության մեջ: Դրամի դերը և մարդու գործոնը: Գիքորի կերպարի զարգացումները՝ ըստ փուլերի: Միջամտության տարբերակները՝ սյուժետային

հանգույցներին: Իրադրային հնարավոր փոփոխությունները: Հասարակարգային սոցիալական հարաբերությունները մարդու նկարագրի, ըմբռնումների և հոգեբանության վրա: Բազազ Արտեմի կերպարի ստանդարտության կաղապարը (շաբլոն) համեմատել հայ գրականության այլ կերպարների հետ՝ շաղախված ժողովրդական և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող փոփոխություններով (Շիրվանզադե «Քառս», «Պատվի համար, Նար-Դոս «Մեր թաղը», Մուրացան «Նոյի ագռավը», «Առաքյալը» և այլն):

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

Բանալի բառեր՝ օգտագործել, ճանաչել, ընկալել, վերլուծել, կիրառել, ստանձնել:

Չափորոշչի այս կետը կարևորում է մաթեմատիկական մտածողությունը՝ որպես երևույթի ճանաչման ելակետ: Մաթեմատիկան ամենուր է՝ մեր տանը, շուրջը, բնության մեջ, հասարակական հարաբերություններում, մշակութային շերտերում և աշխատանքային գործունեության մեջ:

Մաթեմատիկական վերլուծական մտածողությամբ աշակերտը կարող է վերացարկված հասկացությունը ընկալել իրականության մեջ և ուղիներ գտնել կիրարկելու դրանք, տեսնել բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև՝ տեխնիկական առաջընթացի միջև եղած կապը:

Աշակերտը տեսնում է մարդու հոգևոր և ֆիզիկական, կենսական պահանջմունքների համատեքստում տեխնոլոգիական գիտելիքների հնարավորությունը, մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխությունները ենթադրյալ առաջընթացի մեջ:

Առաջադրանք: Աղյուսակների, բանաձևերի միջոցով ցույց տալ «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլի կնոջ կերպարի զարգացումը: Ընդգծել, թե յուրաքանչյուր հաջորդ օղակում ինչ բնութագրիչներ ավելացան կերպարին: Ժամանակային հարթության վրա զուգահեռել կերպարներին՝ կենտրոնանալով հակասությունների վրա: Համընթաց ներկայացնել հեղինակի ասելիքը բարու և չարի, անցավորի և հավիտենականի տիրույթում: Դրանից բխեցնել գործի անմահության գաղափարը: Յուրաքանչյուր քայլ հիմնավորել բնագրային հատվածներով:

Աշակերտներն իրենք են ընտրում այս փուլում ներկայացնելու տարբերակը, որովհետև պետք է ցույց տան նաև վերացականը իրականության վերածելու կարողունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մենք փորձեցինք ընդհանուր գծերով, ամփոփ և համառոտ ներկայացնել ուսումնառության բարդ գործընթացի ամբողջական շղթայի մի քանի օղակներ, որոնք կարող են օգնել հասնելու մեր նպատակին՝ հայ գրականության դասին սովորողների մեջ վերոնշյալ կարողունակությունների ձևավորմանը: Հարկ ենք համարում նորից նշել, որ կարողունակության սահմանների միջև խիստ անջրպետներ չկան, նրանք փոխներթափանցված են, որովհետև ծառայում են մեկ վերջնական նպատակի, որի վերջնարդյունքում ձևավորվում է վաղվա հասարակության գիտակից, պատրաստ քաղաքացին, որն ունի գիտելիք, գիտելիքը իրացնելու հմտություն, արժեքային համակարգ և վերաբերմունք երևույթի հանդեպ: Այս դժվարին գործընթացի անմիջական պատասխանատուները դպրոցը և ընտանիքն են, որոնք ամենօրյա սերտ համագործակցության, կիրթ աշխատանքի, սրտացավության և գրագետ մոտեցման շնորհիվ պետք է կարողանան կրթել և դաստիարակել երեխային՝ սովորողին, որը 2 կողմերի նույն նպատակի վերջնարդյունքի կրող է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Արժեք, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84 (մուտք՝ 30.10.2022):
3. Գիտելիք, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AB%D5%BF%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84 (մուտք՝ 30.10.2022):
4. Դիրքորոշում, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4 (մուտք՝ 30.10.2022):

5. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (մուտք՝ 30.10.2022)։
6. Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Երևան, 1984։